ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

23.02.2026թ.
Ժամը 11[30]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Ա. Ասատրյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի ավագ սպա Խ. Երիցյան:
Բացակայում է՝
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ծատրյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ
2	«Սոլար Հոլդինգ» ՍՊԸ
3	«ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Սոլար Հոլդինգ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ համաձայն ՀՀ Ֆինանսների Նախարության N 03/12-1/2884-2024 գրության, վերոնշյալ փաստաթղթի իսկությունը ստուգելու նպատակով 17.02.2026թ. հարցում է կատարվել ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչությանը: 23.02.2026թ. հայտերի գնահատման և ամփոփման նիստի ժամանակ՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն «Սոլար Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

2.3 «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի և «ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Սոլար Հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի, մասնավորապես՝

«Սոլար Հոլդինգ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված Հավելված 1.1-ում՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող տեղեկատվությունն այն մասին, որ արևային վահանակները ամրացվելու են կլամպներով (Clamp): Քանի որ առարկայի բնութագիրը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել և ներկայացնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 23.02.2026թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: 25.02.2026թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակիցներ.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Գնման գինը /ՀՀ դրամ/	Մրցույթին մասնակցող կազմակերպության անվանումը	գնային առաջարկը /ՀՀ դրամ/		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	արևային վահանակներ (Արևային պանել տակդիրով)	հատ	1 100	46 200 000	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ	54 118 750	10 823 750	64 942 500
					«Սոլար Հոլդինգ» ՍՊԸ	35 704 167	7 140 833	42 845 000
					«ՖՐԻՆԵՐՋԻ» ՍՊԸ	38 250 000	7 650 000	45 900 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 25.02.2026թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «Սոլար Հոլդինգ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Ասատրյան

Գնահատող Խ. Երիցյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան